



“ԹՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ” ԳՈՒԿ ԺԸ 16:

ՀԱՏՈՐ ԺԱ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՄԱՅԻՍ 1, 1882

ԹԻՒ 5

ՊԱՄՊՈՒ

Պամպուեն տեսակ մը խոտ է որ աճելով կ'ըլլայ ծառ: Կը գտնուի հասարակածի երկիրներ, և շատ կը մը շակուի Հնդկաստան և Չին: Կան պամպուի շատ տեսակներ որ փոքր ի շատ է կը տարբերին իրարմ մեծութեամբ և երեւութով: Ընդհանրապէս կը բուսնի խումբ խումբ: Խրաքանչիւր պամպուի տրամագիծն է 1 էն 3 կամ 8 մատ և, երբ կը հասնի, է 40 էն մինչև 60 կամ 80 ոտք բարձր: Յողունը (կոթը) շատ կարծր և սղորկ է արտաքուստ, բայց ներքուստ ունի կակուղ ծուծ, և է, ինչպէս կը տեսնուի պատկերին մէջ, յօդուած յօդուած, որոց հեռաորութիւնն իրարմէ է երբեմն 4 կամ 5 մատ, և երբեմն 4 կամ 5 ոտք: Պամպուն կը գործածուի շատ բաներու, յորոց ոմանք ցուցուած են մեր պատկերին մէջ: Նախ՝ կը գործածուի իբրև կերակուր: Մասաղ ոստերը շատ փափուկ են և կ'ուտուին իբրև ծնեբեկ (գուշ գծնազ): Պամ



պուն նաև կ'աղուի և կ'ուտուի որիցով կամ կը պահուի աղի ջրոյ կամ քացախի մէջ և կամ շաքարով եփուած: Երբ տունկը կ'ըլլայ 14 կամ 15 տարեկան, կու տոյ շատ ծաղիկ և սերմ, և յետոյ կը չորնայ: Արմենն են մեղրահամ, և բնին կամ ցօղնոյն սնամէջ յօդուածներուն մէջ կը դրուին և յօդուածները կաւով ծեփուելով կ'խորովուին կրակի վրայ: Չինաստան և Հնդկաստան ժողովուրդը շատ անգամ պամպուով միայն կը կերակրի, երբ որիցոյ հունձը չի յաշողի: Երկրորդ՝ պամպուի ցօղունը կը գործածուի շինուածներու: Վերոյիշեալ երկիրներու մէջ շատ տուներ պամպուէ միայն են: Գերան, որմունք, ձեղուն և տախտակամած, բոլորը պամպու են: Այսպիսի տուն մի կը տեսնուի պատկերին մէջ: Երրորդ՝ կը գործածուի նաև աղ չինեղու: Պամպուի եղեղունը կամ գասպաններ կը հիւսուին իրարու, և ձեղքուածները կը ծեփուին ձիւթով:

ՊԱՄՊՈՒ

Չորրորդ՝ ամէն տեսակ երկրագործական կազմած և տան կարասի կր շինուի պամպուէ : Չրհորներու ճախարակ, վանդակ, ամբու, սեղան, գըլխարկ, հովանոցակ, հովահար, գոյլ, վահան, նիզակաբուն, պամպուէ շինուած անթիւ տեսակ կահուց և կազմածոց շատ քիչերն են : Իսպրերէն իրարու կցուած պամպուի եղէգներ կը գործածուին ջրմուղներու փոխանակ մեր կապարեայ կամ խեցեղէն խողովակներուն, իսկ բարակ եղեգունք կը գործածուին իբրև գրիչ :

Հինգ երրորդ՝ Չինաստան պամպուի ցողոյն ծուծէն կը շինուի տեսակ մը թուղթ, իսկ արաբքին կարծր մասէն՝ դանակ : Յօդուածներուն մէջ Գուշէ կոչուած հիւթ մը կայ որ շատ յարգի բժշկական դեղ է : Համառօտիւ, գրեթէ անթիւ բաներ կան որ կը շինուին պամպուէ, ուստի կ'արդարանայ սա կարծիքը թէ պամպուն հասարակածի երկիրներուն օգտակարագոյն և գեղեցկագոյն բերքերէն և քաղաքակրթութեան մէջ յետնեայ ժողովրդոց համար՝ բնութեան պատուականագոյն պարգևներէն մին է :

ԱՂԲԵՐԱԿՈՒՆՔ


Աւետարեբի ապրիլի թուոյն մէջ խօսեցանք հողին բնութեան վրայ և տեղեկութիւն տուինք թէ աղբերակունք ինչպէս կը գոյանան :

Ըսինք որ եթէ ջուր հաւաքուի (b) (b) ժայռի խաւի մը տակ, և այն խաւին մէջ ճեղքուածք կամ պատառուածք ըլլայ (c) կամ (d) կէտերուն մէջ, այն տեղերը ջուրը վեր կը մղուի, և աղբիւրի ակ մը կը կազմէ գետնին երեսը յիշեալ կէտերուն վրայ :

Երբեմն ժայռի խաւը տեղ մը ճեղքուած կամ պատառուած չըլլար, և ջուրը ճնշեալ կը մնայ այն խաւին տակ : Այսպիսի տեղ մը Արտեմիս կոչուած ճեղքէր կրնան բացուիլ : Արտեմիս ճեղքէն է որտեղից Երուսաղիմի մէջ ջուրը մղուած էր : Այս անունը կը տրուի այս տեսակ աղբիւրներու Գաղիոյ Արդուա գաւառին անուանէն առնուելով, ուր առաջին անգամ բացուեցան այս տեսակ ջրհորներ : Եթէ երկու ամաններ իրարու հետ հաղորդակցութիւն ունենան խողովակի մը միջոցաւ, ինչ որ ալ ըլլայ այն ամաններուն մեծութիւնը կամ ձևը, երբ ջուր կը լեցուի ամաններէն մէկը, ջուրը խողովակին միջոցաւ կը վազէ միւս ամանին

մէջ, և հաւատար աստիճան բարձրութեան կ'եղէ երկու ամանին մէջ : Արդ, ենթադրենք որ (d) կէտին տակի ծակակէն հողի խաւը ջուրով լի է, յայտնի է թէ այն ջուրը կը ճնշուի ծակակէտէ մը ջրոյն որ (a) (a) ծակակէտ խաւին մէջ կը վազէ ձախ կողմի գետնին երեսէն ուր կը վերջանայ այս խաւը, յայտնի է նաև որ եթէ ձակ մը բացուի ժայռին մէջ (d) կէտին վրայ, ջուրը վեր պիտի մղուի և պիտի ելլէ այնչափ բարձր որչափ բարձր է (a) (a) խաւին մէջ գտնուած ջուրը : Չորրորդինակ, եթէ (a) (a) խաւը ջուրով լի ըլլայ մինչև գետնին երեսը, ջուրը (d) կէտին վրայ պիտի ելլէ գրեթէ այնչափ բարձր որչափ բարձր է պատկերին մէջ (d) կէտին վրայ ցուցուած ծառը :

Բարիզի մօտ Արդեսեան ջրհոր մը 1798 ոտք խոր է, և գետնին երեսէն 32 ոտք վեր ջուր կը ցայտեցնէ : Ամերիկայի Միացեալ Նահանգաց մէջ Սէն



ԱՂԲԵՐԱԿՈՒՆՔ

Լուի քաղաքը 2,200 ոտք խորութեամբ Արդեսեան ջրհոր մը բացուած է : Գաղիացի զօրապետ մը Ալճերիոյ մէջ տեսներով թէ արմաւենիներն չորնալու վիճակի մէջ էին, պատճառը հարցուց : Տեղացիք պատասխանեցին թէ ջուրը պակասած էր, և չէին կրնար ջրել արմաւենիները : «Արմաւենիները պիտի մեռնին», կ'ըսէին, «Աստուծոյ կամքն այսպէս է, և մենք ալ պիտի մեռնինք» : Չօրապետը խորհեցաւ որ թերևս կարելի էր Արդեսեան ջրհոր բանալ հոն : Ուստի լուր ղրկեց Գաղիա, և մեքենաներ բերել տուաւ գետինը ծակելու և ջուր գտնելու համար : Չորսօրուան մէջ ծակը հասաւ տեղ մը ուր ջուր կար, և այնուհետև այն տեղէն շարունակ առատ ջուր վազեց : Ալճերիացիք շատ ուրախացան ասոր վրայ, և բազմաթիւ աղբիւրներ մատուցուեցան Գաղիացի զօրապետին ուրիշ տեղեր ալ այնպիսի ջրհորներ բանալու : Աւելի քան հարիւր ջրհորներ բացուած են Ալճերիոյ մէջ, և շատ տե-

ղեր որ առաջ ամայի անապատ էին, հիմա գեղեցիկ և ծաղկազարդ պարտեզներ եղած են : Անգղիոյ մէջ Հոլի վուել կոչուած տեղը Արդեսեան ջրհորէ մը այնչափ առատ ջուր կը հոսէ, որ մէկ միոն տեղ կը դարձնէ 11 ջրաղացք : Խոտալացի երկրագործ մը իւր ագարակին մէջ ջրհոր մը բացաւ, և ջուրն այնչափ առատ հոսեց, որ բոլոր ագարակը ողողեց, և որովհետև երկրագործը չկրցաւ դադարեցնել ջուրը անոր ագարակը կորսուեցաւ :

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԸԼԼԱԼ

Թերևս մեր ընթերցողներէն ոմանք զարմանան, եթէ հարցունենք անոնց, «Ի՞նչ է Քրիստոնեայ ըլլալ» : «Ինչ է Քրիստոնեայ ըլլալ», պիտի ըսեն զարմանօք. «ամէն մարդ գիտէ թէ Քրիստոնեայ ըլլալ կը նշանակէ վերաբերել ազդի մը որ ընդունած է Քրիստոնէութիւնը» : Այո, Քրիստոնեայ կոչուելուն ընդհանուր նշանակութիւնն այս է. բայց Քրիստոնեայ ըլլալ բուն չի նշանակեր դայս : Քրիստոսի աշակերտներն առաջին անգամ Քրիստոնեայ կոչուեցան Անտիօք քաղաքը Յայտնի է թէ Անտիօք գտնուող աշակերտք այս անունն առին ոչ թէ վասն զի այս ինչ ազգի կամ ցեղի կը վերաբերէին, այլ վասն զի աշակերտ

կամ հետևող էին Քրիստոսի : Անոնցմէ ոմանք Յոյն էին, ոմանք Հրեայ, անտարակոյս կային նաև ուրիշ ազգերէ կամ ցեղերէ մարդիկ անոնց մէջ : Մարդ կըրնայ բառին առաջին նշանակութեամբ Քրիստոնեայ ըլլալ, այսինքն վերաբերի Քրիստոնեայ կոչուած ցեղի մը, բայց և այնպէս չըլլալ հետևող Քրիստոսի : Հայք, Յոյնք, Անգղիացիք և ուրիշ շատ ազգեր Քրիստոնեայ ազգեր են, բայց և այնպէս կան անոնց մէջ բիւրաւոր մարդիկ որ աշակերտ չեն Քրիստոսի, այլ անհաւատ : Պէտք է գիտնալ սակայն, որ Քրիստոս փրկել է անոնց միայն որ անոր աշակերտ են : Արդ, Մուրը գիրք յայտնի կը սորվեցունէ մեզ թէ ինչ է աշակերտ ըլլալ Քրիստոսի : Աշակերտ ըլլալ Քրիստոսի է ունենալ անոր ոգին, անոր բարքը, այսինքն ըլլալ անոր նման : Մուրը գիրք կը սորվեցունէ նաև թէ այսպիսի ըլլալու համար պարտինք ապաշխարել և հաւատալ Քրիստոսի, այսինքն՝ ընդունիլ զիս իբրև փրկիչ և քառիչ մեղաց և

հնազանդիլ անոր : Այս է զոր իւրաքանչիւր ոք պարտի ընել իրեն համար : Ոչ հայր , ոչ մայր կրնան ընել զայս իրենց որդւոց համար , և ոչ եղբայր իւր արիւրելի եղբոր և քրոջ համար . ամէն մարդ պարտի ընել զայն իւր ունձին համար :

Ամէն մարդ պարտական է ընել զայս անմիջապէս երբ կը ճանչնայ թէ ինչ է մեզք , հաւատք և սէր . անմիջապէս երբ կը զգայ պարտականութեան ստիպող զօրութիւնը : Տղայք մեզք , հաւատք , սէր և պարտականութիւն բառերուն նշանակութիւնը կը սորվին կանուխ : Երեք տարուան և աւելի փոքր տղայք , եթէ ըստ պատշաճի կրթութիւն , կրնան դիտնալ թէ ինչ ընել պէտք է աշակերտ ըլլալու համար մեր օրհնեալ փրկչին Յիսուսի : Ի՞նչ քաղցր և սիրելի է մեր փրկիչը : Ամէնքս սիրելու ենք զնա , և շնորհակալ ըլլալու ենք ամէն օր անոր խնամտ սիրոյն համար , և բոլոր սրտով և հոգւով ծառայել անոր : Եթէ մեր ընթերցողներուն մէջ կայ որ դեռ սկսած չէ այս կերպով ապրիլ ֆրիստոսի համար , թող սկսի անյապաղ :

ՄԱՆՐԱՑՈՑՅՆ Ի՞ՆՉ ԿՐՑԱՑՏԵՆ

Դիտակն է գործի մը որ կ'օգնէ մեզ տեսնելու այն պիտի առարկաներ որ շատ հեռի ըլլալով լոկ աչաց անտեսանելի են : Իսկ մանրացոյցը կ'օգնէ մեզ տեսնել շատ մանր առարկաներ զորս լոկ աչօք տեսնել կարելի չէ : Մեր նպատակը չէ հոս նկարագրել թէ ինչպէս կը շինուի մանրացոյցը , բայց կ'օգնենք մեր ընթերցողաց քիչ մը տեղեկութիւն տալ այն բաներուն վրայ զորս մանրացոյցը կը յայտնէ մեզ : Եթէ լըճացեալ ջրայ կաթիլ մը խոշորցոյի այնչափ որ անոր տրամագիծը բնական մեծութենէն 200 անգամ աւելի ըլլայ , վերի պատկերին մէջ տեսնուած բաներուն նման բաներ կ'երևին : Կը տեսնուի թէ այն ջրոյ մէկ կաթիլը լի է տեսակ տեսակ անասնիկներով : Եթէ այն ջրոյ կաթիլը գործիքով աւելի ևս խոշորցոյի , և ճերմակ լաթի մը վրայ ցորացոյի , այն լաթին առջև կենտրոն կրնա տեսնուի անասնիկներուն շարժումները : Անասնի պիտի տեսնես որ անասնիկներէն ունակը կը որ և այլք ձուսնէ են : Չունին ոչ աչք , ոչ սրբունք . և ոչ ստամոքս , այլ են մանր

ժովբուծի նման , և երբ ուտելիքի կը տոր մը կը դպչի անոնց , կը բացուին , և ուտելիքի կտորը իրենց մէջ առնելով կ'ուտեն : Պիտի տեսնէք ուրիշ շատ տեսակներ որ ունին սրունդներ և լողալու գործիքներ :

Այս անասնիկները գրեթէ անշարժ կը մնան ջրոյ մէջ , և իրենց փոքր մազանման թերերը կը բանան և անդին ասդին կը շարժեն որպէս թէ որս փնտռելու համար : Կրնա տեսնել անասնիկին կուրծքին շարժումները , և կարծես թէ շունչ կ'առնէ կուտայ : Երբ մասնիկ կամ անասնիկ մը անոր թերերէն մէկուն ծայրին դպչի , անմիջապէս անասնիկը կը յարձակի անոր վրայ , կը բռնէ զայն և իւր մէջն կ'առնէ , և կը կերակրուի : Կրնա տեսնել



ամբողջ անասնիկը որ պառկած է միւսին ստամոքսին մէջ : Ի՞նչ զարմանալի աշխարհ մ'է ջրոյ այն փոքրիկ կաթիլը : Շատ մարդիկ իրենց կեանքը անցուցած են ընելու այն փոքրիկ անասունները , և սորվելու անոնց սովորութիւնները : Այս անասնիկներն այնչափ փոքր են որ սոսկ աչքով բնաւ չեն տեսնուիր , սակայն այնչափ շատ եղած են , որ ընդարձակ գետիներ կազմուած են անոնց դիականց մնացորդներովը :

ԴԱՐՁՆԱԼ ԶԱՆԱ

«Դասդ սորվեցար , Գէորգ ,» ըսաւ Պարոն Յակոբ իւր որդւոյն , որ գիրքը մէկդի դրած թղթէ թուղթի մը շինելու զբաղած էր :

«Ոչ , հայր ,» պատասխանեց Գէորգ , գլուխը կախելով :

«Ինչո՞ւ չէ , տղաս :»
«Քանզի շատ դժուար է , հայր : Աղէկ գիտեմ որ երբեք պիտի չկրնամ սորվիլ զայն : Նաև , սորվելէս ետքը չեմ կրնար յիշել , վասնզի յիշողութիւնս տկար է :»

«Եթէ խօսք տայի քեզ որ յառաջիկայ ամսոյն երեսներուդ օրը արձակուրդի օր պիտի ըլլար քեզ , կը կարծես որ այդ օրը պիտի մոռնայիր :»

«Ոչ , վստահ եմ որ պիտի չմոռնայի :»
«Սահելու , թուղթի արձակելու և քարէ դնողակ խաղալու մէջ շատ վարպետ ես , այնպէս չէ :»

«Այո , հայր :»

«Եւ դասդ չե՞ս կրնար սորվիլ : Սիրելի տղաս , ինքզինքդ կը խարեաս Գուն կրնաս սորվիլ այնչափ աղէկ որչափ միւսները , եթէ միայն ջանաս :»
«Բայց չլանացի , հայր ,» դարձեալ հարցուց Գէորգ :
«Լաւ , դարձեալ ջանաս : Այս կէս օրին չինելու թուղթի մէկդի դիր , և դասդ պատրաստելու ջանք մը ևս ըրէ : Փութաջան եղիր , և շուտ մը պիտի սորվիս : Քեզ ցուցնելու համար թէ միայն յարատուութիւն պէտք է , պատմութիւն մը պիտի ըսես :»

Աւելի քան երեսուն տարի առաջ գիւղի մը դպրոցին մէջ ըթամիտ տղայոց մին առաւօտ մը իւր դասը ըսելու դնայ , և , սովորականին պէս չգիտցաւ զայն : «Տեղդ դնա» , ըսաւ վարժապետը բարկութեամբ : Եթէ դասիդ աւելի հոգ չտանիս ո և է բանի կամայ մը տեղը դնայ , և աչքերը դարձեալ իւր դասին վրայ կախեց :

«Անօգուտ է ջանալս , չեմ կրնար սորվիլ ,» ըսաւ կամայ ձայնով մը իւր քով նստող մէկ ընկերին :
«Պէտք է որ շատ ջանաս ,» ըսաւ բարեսիրտ տղան :

«Չանացած եմ , սակայն անօգուտ է , ջանամ կամ չլանամ մի և նոյն բանն է :»

«Դարձեալ ջանա , Յակոբ ,» ըսաւ ընկերը խրախուսական ձայնով մը :

Այս երկու կարծ բառերը Յակոբին նոր մղում մը տուին , և դարձեալ ուշադրութիւնը իւր դասին ուղղեց , եւ տակաւ առ տակաւ գտաւ որ կարդաւ

ցած խօսքերը իւր յիշողութեանը մէջ կը մնային, և շուտ մը ի մեծ զարմացումն և ի մեծ բերկրութիւն բոլոր դասը սորվեցաւ: Ուստի իւր տեղէն ելաւ և վարժապետին գրասեղանին մօտեցաւ:

«Ի՛նչ կուզէք,» հարցուց վարժապետը:

«Դասս ըսել, Տէր:»

«Մի՞թէ կէս ժամ առաջ չփորձեցի՞ր:»

«Այո, բայց հիմա կրնամ ըսել զայն, Տէր:» ըսաւ տղան:

«Ըսէ՛ նայի՛մ:» Յակոբ սկսաւ, և իւր բոլոր դասը առանց սխալի մը ըսաւ: Վարժապետը շատ գոհ եղաւ: Այն օրէն սկսեալ, ըսաւ Պար. Յակոբ Գէորդին, դպրոցին մէջ տղայ չկար որ Յակոբէն աւելի շուտ սորվէր: Այն օրէն մինչև ներկայ ժամն Յակոբուսանող մը եղած է, և հիմա կը ստիպէ իւր Գէորդ որդին որ դարձեալ ջանաս:

«Իրօք դո՞ւն էիր, հայր,» հարցուց որդին, անձկանօք իւր բարի հօր երեսը նայելով:

«Այո, որդեակ իմ: Այն բժժամիս տղան իւր մանկութեանը ժամանակ քու հայրդ էր:»

«Ուրեմն, դարձեալ պիտի ջանամ,» ըսաւ Գէորդ վճռողական ձայնով մը, և մէկդի ձգելով իւր կիսաշէն թռուցիկը, տուն դարձաւ, և շուտ մը խորին ուշադրութեամբ սկսաւ դասը սորվիլ:

«Յաջողեցա՞ր, Գէորդ,» հարցուց պարոն Յակոբ երբ ընտանիքը սեղանին բոլորտիքը ժողոված էր:

«Դասս սորվեցայ, հայր,» պատասխանեց տղան, «ամէն բառ կրնամ ըսել:»

«Դժուարութիւն գտա՞ր,»

«Ոչ, այնչափ դժուարութիւն չգտայ, երբ անգամ մը միտքս դրի որ պիտի սորվիմ զայն: Աղբարե երբէք սովորականին պէս չկայնեցայ խորհելու համար, այլ ուղղակի յառաջ տարի մինչև որ բոլոր պարբերութիւնները սորվեցայ:»

«Այս դասն երբէք չմոռնաս, տղաս,» ըսաւ պարոն Յակոբ. «դուն հիմա յաջողութեան գաղտնիքը գտար, այսինքն սորվեցար երբէք չկայնիլ դործի մը դժուար կամ ձանձրալի ըլլալուն վրայ խորհելու համար, այլ անընդհատ յա-

ռաջանալ յաջողելու հաստատ որոշմամբ:»

Պարտիզակ ԱՁԱՐ Լ. ԵՂԻԱԵԱՆ

ՄԱՐԳԿԱՅԻՆ ԱՁԳ

Թէև Սուրբ զիրք կը սորվեցնէ թէ բոլոր մարդիկ սերած են մէկ հօրէ և մէկ մօրէ, սակայն այս նիւթը քննողներուն յայտնի է թէ մարդիկ լեզուի, քաղաքակրթութեան և մարմնոյ կազմութեան կողմանէ մեծ տարբերութիւններ ունին: Այս տարբերութիւնք են արդիւնք կլիմայից, կերակուրի և ապրելու եղանակաց: Բնաբանք մարդկային ազգի այլ և այլ բաժանումները դասակարգելով ընդհանրապէս կը բաժնեն հինգ ցեղերու. 1. կովկասեան, 2. Մոնղոլեան, 3. Եթովպական, 4.

և 6. թիւն է որսորդի զղեստ հազած մարդ:

Կովկասեան ցեղը կը բաժնուի երեք ճիւղերու: Առաջինն է հիւսիսային Ափրիկեան ճիւղն որ կը պարունակէ Նուպիացիներն, Ապսինիացիներն, Մալթիանացիներն և զայս:

Երկրորդն է Սեմական կոչուած ճիւղն որ կը պարունակէ Հրեաներն, Արաբացիներն և Սիրիացիները:

Երրորդ ճիւղն է Արիական ճիւղն որ կարևորագոյնն է: Որովհետև այս ճիւղն է մեծագոյն և կարևորագոյն մասն մարդկային ազգին, յառաջիկայ թուոյն մէջ նախ համառօտ յօդուածով մը տեղեկութիւն պիտի տանք այս ցեղին վրայ, և յետոյ պիտի անցնինք նկարագրել միւս ցեղերը:

ՀԱՆՆԼՈՒԿ

Նաև մը ժայռի մը զարնուեցաւ, և նաևուն կողը ծակ մը բացուեցաւ: Նաևուն մէջ միայն մէկ կտոր տախտակ կայ այն ծակը գոցելու համար: Տախտակն է 9 մատ լայն և 16 մատ երկայն, իսկ ծակը որ պիտի գոցուի է 12 մատ լայն և 12 մատ երկայն: Արդ ատաղձագործը տախտակն ի՞նչպէս բաժնելու է երկու կտորներու որ բոլորովին գոցեն ծակը:

Պատասխանը յաջորդ թուով կու տանք:

Օր մը երկու երիտասարդ թև թևի տուած կը պտտէին, և կ'երևէր թէ կարևոր նիւթի մը վրայ կը խօսէին: Երիտասարդներէն մին ըսաւ իր ընկերին.

«Յովհաննէս, հաւատա ասոր. ճշմարիտ է այն խօսքը զոր ըսած է երևելի անձ մը. Մշխատէ այնպէս թէ յաւիտեան պիտի ապրիս, ապրէ այնպէս որպէս թէ այսօր պիտի մեռնիս:»

ԱԻԵՏԱԲԵՐՆԵՐՈՒ ԳԻՆԵՐԸ

ԱՄՄԱԿԱՆ (Հայերէն հրէշ և Հյ. Տաճկերէն և Պոսլաերէն), փոսթայի ծախքով, տարին ¼ մէճիտիլէ:

Ամերիկայի Միտինարաց ընկերութեան կողմէն
Խմբագիր Ճ. Ք. ԿՐԻՆ
Ֆիլադելֆիայ Եօգուչու, Ամերիգան Խան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱՐՈՒԹԻՒՆ Ա. ՏԱԿՈՑ ՊՕՅԱՅՈՍ



Մալայեան և Յ. Ամերիկեան:

Այս թուոյն մէջ պիտի յիշենք կովկասեան ցեղին յատուկ նշաններէն դոմանս, և միւս թիւերուն մէջ պիտի նկարագրենք միւս ցեղերը:

Կովկասեան ցեղն ունի սովորաբար բաց մարթ, ուղիղ կամ գանդուր մազ, հաւկթաձև երես և բարեկազմ կերպարանք: Այս ցեղը կը գտնուի հարաւային արևմտեան Ասիոյ, հիւսիսային Ափրիկէի, գրեթէ բոլոր Եւրոպայի, Ամերիկայի և Աւստրալիոյ մէջ: Աշխարհի երևելի ազգերն են այս ցեղէն: Վերի պատկերին մէջ կը տեսնուին այս ցեղին վերաբերեալ տարբեր տարբեր անհատներ: 1. Թիւ պատկերն է Եւրոպացի, 2. թիւն է Չէրքէս պէյ, 3. թիւն է Վրացի աղջիկ, 4. թիւն է Արապ ցեղապետ, 5. թիւն է Հնդիկ Պրահմին կամ Հնդիկ քուրմ,